

Աստուծոյ ասանը խմբուած աեսնում ենք ս. սեղանի վերայ մեր Փրկչի կենդանարար մարտինն ու արթւնը, և արտայցառում ենք դորանով այն ոգեսրիչ գազափարը թէ. Քրիստոսի ս. յայտնութիւնը հեռու մուժ անցեալում կորած մի ստուեր չէ, այլ ներկայ է և միշտ նորոգուող՝ խորհրդաւոր հոգենորոգ մի իրողութիւն:

Հին քրիստոնեաները եղբայրական համբայրով էին հաղորդում միմեանց Քրիստոսի ս. յայտնութեան բերկրասիթ ողջոյնը, և մինչ ուրիշ քրիստոնեաներ բոլորովին մոռացել են այդ գեղեցիկ սովորութիւնը, Հայոց աւանդապահ եկեղեցին նորա միշտակը պաշել է՝ համբայրը զլիի շարժմամբ փոխարինելով: Երանին նոյնչափ լաւ պահուած լիներ ողջոյնի խորհուրդը հայ ժողովուրդի մէջ...

Խորհուրդ մե՛ծ և սքանչելի... որի յայտնութեամբ բոլոր ձորերը լեցուում են, լեռներն ու բլուրները իջնում, ուզզուում են բոլոր խորդութօրդութիւնները և քարքարոտ տեղերը հարթ ձանապարհ դառնում: որ Աստուծոյ փրկութիւնն է բերում բոլոր մարմներն էակների համար՝ ...* որ ամրարտաւաններին ձգում է իրենց զօրութեան աթոռից և խոնարհներին բարձրացնում:** հաւասարեցնում է իշխանին և ստորւկին, հարուստին ու աղքատին, մեծին ու փոքրին, և ամենքին միացնում ի մի համբայր եղբայրութեան:

Խորհուրդ սքանչելի, որ խաղաղութիւնն է սփռում այս նախանձով և տաելութեամբ կռուով և չարութեամբ լի երկրի վերայ՝ հած և հաշտ դարձնում եսական շահախնդըրութիւններով ու մոլի կրքերով լի մարդկանց սրտերը, որ ամենախիստ սառնամանեաց մէջ ջերմ հոսանք բղիւցնել մեռելային ապառաժների զրկում նոր կեանքի սաղմ աճեցնել կարող է...

Թո՞ղ նա մեր սառը սրտերն ես ջերմացնէ ու ապառած կրծքերը կակղացնէ: թո՞ղ մոռանալ տայ մեր առօրեայ վշտերն ու նեղութիւնները, մեր եսական ցանկութիւններն ու թշնամական զգացումները, և, սուրբ սիրով ու խաղաղական ուրախութեամբ լեցուած՝

երգել ստիպ, երկնքի հրեշտակների հետ ու գոչել: Փառք ի բարձուն Աստուծոյ ... Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ ...



ՃՆՈՐՑԱԿԱՐ ՆՈՐ ՏԱՐԻ.

Եւ իմ պատ կ գործել զբուծայնորին ու առավեաց զիս, միմէ աւուր կայ, զայ գիշեր, յարժամ ու ով կարք գործել:

Յովի. Թ. 4:

ՄԱՐԴԻԿ սովորաբար ուրախ գեմքերով զիմում են միմեանց շնորհաւոր նոր տարի, մաղթելու: Այդ ուրախութիւնը իւր արտաքին կողմերով յածախ չափազանցութեան է հասնում՝ կեր ու խում: աղաղակ փողոցների վերայ մինչեւ խակ անկարգութիւններ, որ բարոյական աչքի և ականջի համար անախորժ մնել կարող է:

Բայց այսպէս չէ այն մարդկանց համար, որոնք կեանքի վերայ լրջութեամբ են նայում: որոնց ուսերի վերայ սրբազն և վեհ կոչումն է ծանրանում ծառայելու ժողովրդին, ծառայելու յաւիտենական բարեաց գաղափարին: Նոր տարուայ օրը ուրախութեան և զուարձութեան օր չէ, այլ մի սրբազն և նուիրական վայրկեան, երբ մեր հոգու բոլոր զօրութիւնները լարած պիտի բաժանուինք հին տարուց և նորի մէջ մանենք. քրիստոնեայի համար նոր տարուայ օրը աղօմքի և հոգեոր հաշուետութեան օր է Աստուծոյ և խղճի առաջ:

Տարեվերջին հաստատութիւնները փակում են իրենց տօմարները և հաշիւ տալիս աւելի բարձր հաստատութիւնների: Այսպէս պէտք է լինի և անհատը նա հաշիւ պէտք է տայ Աստուծոյ և իւր խղճի առաջ: թէ ինչ է ձեռք բերել անցած տարուայ մէջ, որ մայունն է, որ տեսական է և ոչ այնպէս անցաւոր ինչպէս հին տարին էր: Նոր տարուայ շնորհաւորութիւնը յիշեցնում է մ.զ. որ հինը անցաւ անդառնալի կերպով ուստի և

* Կոկ. Գ. 5—6. ** Կոկ. Ա. 52:

պարտաւոր ենք խորասուզուել այդ անցեալի մէջ, որոնել մեր կեանքի, մեր գործի զրական կողմերը, գանել թերին՝ ապազայում ու զզելու համար: Մ'ենք իրաւունք ունինք ուրախանալու միայն այն զեպքում, երբ մեր հոգու հաշուեմատեանները ուղիղ են, երբ անցաւոր ժամանակի մէջ այնպիսի բարիք ենք ձեռք բերել որ մեզ համար և մեր ժողովրդի կամ եկեղեցու համար տեական նշանակութիւն ունի: Այս մտքով իրաւունք ունինք նոր տարուայ տօնախմբութեան վերայ աւելի բարձր, սրբազն տեսակէտով նայել, քան լոկ արտօքին զուարձութեան և ուրախութեան, որ տարարազգաբար ընդհանրացած է թէ մեր և թէ ուրիշ հաստրակութիւնների մէջ: Մ'ենք երբէք մոայլ կեանքի քարոզող չենք, բայց կեանքը չպէտք է իւր լրջութիւնը կորցնէ այնպիսի նուիրական վայրկեաններին, որ մեր ապազայի համար ծանրակշիռ նշանակութիւն ունին:

Արդ, ի՞նչն է տեական, ի՞նչն է մնայուն, որ անցնող ժամանակի մէջ ձեռք բերել կարելի է: Այս հարցի պատասխանը Փրկիչն է տալիս. մնա պարտ է զործել զզործս այնորիկը, որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ, զայ զիշեր, յորժամ ոչ որ կարէ զործելու: Ժամանակը շահեցնելու միջոցը գործն է: Անցնող ժամանակի մէջ զրականը աշխատանքով ձեռք բերուած հոգեւոր բարիքն է: Նիւթական բարիք ձեռք բերելու համար մեծամեծ չանքեր են հարկաւոր, որքան ևս առաւել հոգեւոր հարստութեան, տեական բարեաց համար: Ժամանակը անցնում է նետի նման, եղիկիրը կատարում է իւր ընթացքը տիեզերքի ծիրոջ կարգադրութեան համաձայն, մեզ մնում է միայն օգտուել «մինչ աւուր կայ, զայ զիշեր, յորժամ ոչ ոք կարէ զործելու: Քրիստոնեութեան համար աշխատանքը նուիրական զաղափար է և ծուլութիւնը մահացու մեղքերից մէկը: Քրիստոնեայ մարդու կեանքի սկզբունքներից մէկը պիտի լինի աշխատանքի գաղափարը: Գործն է կեանքի և շարժման նշանը: Բայց ոչ ամենայն գործ, որ շարժում է, կեանք է: Կան զործեր, որ ոչ թէ յաւետեական բարիք, այլ չարիք են ծուլում: Փրկչի պահանջած գործերը հոգեւոր կեանքի, լուսոյ

զաղափարի յաղթութեան գործերն են, որոնք միմեանց յաջորդելով մարդկային կեանքի մէջ հոգեւոր նոր տարիներ և շրջաններ են յառաջ բերում: Մ'եր անցած տարուայ գործերի քննաթեան չափը պէտք է լինի այն տեսակի, թէ որքան մենք մեր գործերով նպաստել ենք մեր անձի փրկութեան, թէ որքան նպաստել ենք հայ ժողովրդի կրօնական: — բարոյական: Հոգեւոր — քաղաքակիրթական կեանքի զարգացման նիւրագանչիւր ոք պարաւուր և աշխատել իւր չափով, իւր հոգեւոր կարողութեամբ, բայց միշտ այն զիտակցութեամբ, թէ նորա կատարած գործը մի կաթիլ է ովկիանսուի մէջ: Թէ ծառայք անպիտան եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաբ: Այսպէս պէտք է մտածէ, և զործէ չայցատանեացց եկեղեցու իւրաքանչիւր հարազատը՝ լինի քահանայ, վարդապետ: Թէ աշխարհական անձն:

Ազմուկ հանել թմրուկներ զարներ առանց զրական բան կատարելու՝ չնչին մարդկանց յատկութիւնն է: Ամենայն ինչ հոգեւորականներից սպասել սակայն ոչ մի չանք չխնայել աններելի միջոցներով նոցա զործունեութիւնը ըլատելու: Հայոց ազգի ամենայն չափեաց, թշուառութեան պատճառ հոգեւորականներին համարել և անխոհեմ զործերով նարա անկման խորխորացը փորել: Ճանր բեռներ զնել հոգեւորականութեան վերայ, առանց մատի չափ նորա հոգեւոր վերակինդանութեան և զարգացման նպաստելու՝ նշանակումէ կեանքը, պատմութիւնը իւր երեսումներով ըլմբունել:

Ի հարկէ մենք անտեղեակ չենք մեր թերութիւններին՝ շատ աւելի խօսն ենք ըմբռանում, թէ որտեղ է չարեաց արմաաը. բայց ուր է զիւթական այն գաւաղանը, որով աշխարհը միանգամբ կերպարանափոխ կարելի է անել: Մ'ի ժողովուրդ, որ ամենայն տեսակ լուսանքներ, զրպարանութիւններ առանց յուղուելու կարգալ և մինչեւ իսկ խրախուսել կարող է, մի ժողովուրդ, որի մէջ մամնելի զրօշակի շուրջը խմբուած շատ անձնաւորութիւններ զիտակցաբար ստել, հակառակորդներին անփայել կերպով ցեխոտան կատող են՝ առանց իործի փոքրիկ խոյթ զգալու, մի ժո-

զովուրգ, որ անտարբեր նայել կարող է, թէ ինչպէս նախնեաց թողած պրագան աւանդները իւր իսկ տհաս և անհաւատարիմ զաւակների ձեռքով քանդուում են՝ բնական է, որ իւր ամենամեծ հաստատութիւնների մէջ ես մեծ թերութիւններ երեան հանեւ:

Մ'նք չենք ուրանում մեր թերութիւնները, զիաենք, որ մեր առաջնորդութիւններն ու յաջորդութիւնները թափուր են, որ մեր քահանանոյութիւնը ընդհանուր առամբ ագետ է, որ մեր վանքերն իրենց կոչման ծառացել չեն կարողանում, որ մենք կենդանի խօսքի քարոզիչներ չունինք, որ մեր հոգեոր երգեցողութիւնը բարեփոխութեան կարօտ է, որ մենք աղքատների խնամատարութիւն չունինք՝ աւետարանի և եկեղեցու պատմութեան ցոյց տուած պահանջների համաստ, որ մենք քրիստոնէական որբանոյներ, հիւանդանոցներ, անկելանոցներ չունինք մեր նախնեաց նման: Բայց և այն զիտենք, որ հոգեոր կեանքն էլ իւր աձման և զարգացման պայմաններն ունի, որ բարձրագույ աշխակներն ու ծոճացող բառերը ոչ մի ազգի տուն չեն շինել, այլ լուրջ, երկարատեև և անձնուէր գործունեութիւն է պէտք: — Աշամամանակը շահեցնելու միջոցը և Փրկչի ցոյց տուած ճանապարհը:

Թող գան ու անցնին տարիները՝ մենք լուռ ու մունչ կրամանուինք նրանցից, բայց երր նկատենք ցանկալի կրօնական — հոգեոր կեանքի արշալոյսի նշանները, այն ժամանակ միայն կզբանք, որ ժամանակը ի զուր չենք կողըրել և ցնծութեան աղաղակներով կդուշներ. «Շնորհաւոր Նոր տարի»:

Դ. Ա., Յովլէփեան



ՄՈՒՏԻՌՆԵ

ԱՊՈՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԵԼ:



«Ս. Պետերբուրգեան ՅԵԴՈՅՈՒԹԻՒՆ» ԱՊՈՔԻ ԹԵՐՈՒԹՈՒՄ (11 նոյեմբ. № 310) Հրատարա-

կուել է այն զեկուցումը, որ ֆրանսիական տկաղեմիայում 1898 թ. նոյեմբերի 17-ին կարգացել է Պիեր Լուսին՝ Մոնտինի Առաքինութեան համար նշանակուած մրցանակաբաշխութեան առթիւ: Մ'նք այդ հետաքրքիր զեկուցումը ամբողջովին կը թարգմանենք, բայց նախ անհրաժեշտ է համառօտ ծանօթութիւն: Բարսն Մոնտինը ֆրանսիացի նշանաւոր բարեգործ էր, նա ծնուել է Պարիզում 1733 թ. հոկտ. 23-ին, վարել է զանազան քաղաքական պաշտօններ, բայց իւր ո զատ մասմասունքների պատճառաւ ենթարկուել է հալածանքի, իսկ յեղափոխութեան ժամանակ ստիպուած էր հեռանալ Անգլիա: Երբ թագաւորութիւն հաստատուելուց յետոյ երկիրը խաղաղուեց, նա նորից վերագրձաւ ֆրանսիա և կեանքի վերջին օրերը անցրեց բարիզներ անելով: Նա մեռաւ 1820 թ. դեկտ. 29-ին: Մ'նք էր նորա կարողութիւնը, որի ամենամեծ մասը կտակել է բարեգործական նպատակների համար, յայտնի է նրա առաքինութեան (prix de vertue) կամ «Մոնտինիան» մրցանակը:

Պիեր Լուսու զեկուցումն այս է. «Մ'նք նից ամեն մէկը իւր կեանքի մէջ առիթ է ունեցել որ և է լաւութիւն տնելու, առանց մեծ զրկանքների և զոհերի: Եւ մենք այդպիսի զեկուցերում գոհ ենք եղել, մեզ համարել ենք բարեգործ: Բայց մենք ողբան անսահման հիսուս ենք այն համեստ և անյայտ անձնազուհներից, որոնց մասին այժմ պէտք է խօսեմ: Մ'նք բոլորս, աշխարհային մարդիկ, ինչքան էլ մեծ են մեր հոգեկան գաղանի տանջանքները — միշտ եղել ենք և կը լինենք բախսի լնարեալներ: Բաւականութիւն ըստացած ցանկութիւններ, փառամոլութիւն, անիրազործելի յոյսեր՝ տհա մեր մշտնջենական տիրութիւնը. նոցա աղբիւրը մեր մէջն է, աւելի մեծ համբերութիւն և աւելի պակաս եսականութիւն — և այդ հոգսերը կանհետանան ինչպէս ծուխ: Մ'նք բոլորս հարուստ ենք, հաշակաւոր կամ առնուազն աղահովեալ: Մ'ինչ նոքա, որոնց մասին պէտք է խօսեմ, ոչինչ չունեն և երբեք էլ չեն ունեցելը — ոչ ոյժ, ոչ առողջութիւն, ոչ էլ ամենօրեայ հայի պատառ — և չնայած զբան նոքա